



## **Ֆիզիկական անձի կողմից իրավաբանական անձին հող օտարելուց առաջացող հարկային պարտավորությունների վերաբերյալ**

### Հարց

Ֆիզիկական անձի կողմից իրեն պատկանող հողատարածքը իրավաբանական անձին օտարելու դեպքում ի՞նչ հարկային պարտավորություններ են առաջանում:

### Պատասխան

#### ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 143-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար եկամտային հարկով հարկման բազա է համարվում հարկվող եկամուտը, որը որոշվում է որպես օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված համախառն եկամտի և օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերություն,

- 147-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետին համապատասխան՝ եկամտային հարկով հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում հողամասի (անկախ հողամասի նպատակային նշանակությունից) օտարումից ստացվող եկամուտները:

Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում ենք, որ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից հողամասի (անկախ հողամասի

նպատակային նշանակությունից) օտարումից ստացվող եկամուտները համարվում են նվազեցվող եկամուտներ: Հետևաբար, իրավաբանական անձի կողմից ֆիզիկական անձից ձեռք բերվող հողամասի դիմաց վերջինիս վճարվող եկամուտներից եկամտային հարկի պարտավորություն չի առաջանում:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

